ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Գ Ի Տ Ու Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «10» հոկտեմբերի 2018 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 45-Ա/Ք

«ԱՐՑԱԽԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ-2018» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001 թ. նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով», հիմք ընդունելով ՀՀ ԿԳ նախարարի 2018 թ. հուլիսի 27-ի N 823-Ա/2 հրամանի 3-րդ կետը, ՀՀ ԿԳ նախարարի 2016 թ. հունվարի 27-ի N 48-Ա/Ք հրամանով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2018 թ. հոկտեմբերի 8-ի նիստի N 2 արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել մրցութային կարգով ընտրված գիտական թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետ՝ Ռուզան Ասատրյան)՝ մրցույթի և գիտական փորձաքննության արդյունքների մասին տեղեկացնել գիտահետազոտական խմբերի ղեկավարներին:
3. ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տիգրան Գալստյան)՝ գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2018 թ. հոկտեմբերի 1-ից:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ ԳԿ նախագահի
«10» հոկտեմբերի 2018 թ.
N 45-Ա/Ք հրամանի

«ԱՐՑԱԽԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ-2018» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ

N	Ծածկագիր	Թեմայի ղեկավար	Թեմայի անվանում	Թեմայի գիտական խորհրդատու	Թեմայի կատարման համար պատասխանատու կազմակերպությունը (ԱՀ)
1	18AA-002	Մարտիրոսյան Գուրգեն Խաչատուրի	Թռչող սարք	Վանցյան Անուշավան Արիստակեսի	«Արցախի գիտական կենտրոն» ՊՈԱԿ
2	18AA-003	Իսրայելյան Արևիկ Լևոնի	Պրոբիոտիկ կաթնաթթվային բակտերիաների համակցությունների հիման վրա նոր մերանների տեխնոլոգիայի մշակում	Տխրունի Ֆլորա Նուբարի	«Արցախի գիտական կենտրոն» ՊՈԱԿ
3	18AA-005	Սարգսյան Քրիստինա Վյաչեսլավի	Արցախի տարածքում էկոլոգաերկրաքիմիական հետազոտություններ. Շրջակա միջավայրի վրա Դրմբոնի պղինձ-ոսկու փակված հանքավայրի ազդեցության գնահատում	Սահակյան Լիլիթ Վարուժանի	«Արցախի գիտական կենտրոն» ՊՈԱԿ
4	18AA-006	Սարգսյան Անյուտա Վալերիի	Արցախի Հանրապետության բնական խոտհարքների ուսումնասիրությունը	Մեժունց Բագրատ Խաչատուրի	«Արցախի գիտական կենտրոն» ՊՈԱԿ
5	18AA-008	Հայրապետյան Վահրամ Տորիկի	Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի նախալեռնային գոտու կենսաբազմազանության ուսումնասիրությունը	Պապով Գեորգի Յուրիի	«Կանաչ Արցախ» կենսոլորտային համալիր ՊՈԱԿ
6	18AA-010	Գրիգորյան Նարինե Յուրիի	Ընտրված դեղաբույսերի սիներգիկ հակաբորբոքային ազդեցության մոլեկուլային մեխանիզմների in vitro ուսումնասիրություն և արտադրանքի թողարկման առաջարկությունների մշակում	Բաբայան Նելլի Սամվելի	«Արցախի գիտական կենտրոն» ՊՈԱԿ
7	18AA-012	Բաղունց Գագիկ Միքայելի	Ֆոտոէլեկտրական կերպափոխիչների արդյունավետության հետազոտությունը կախված ջերմաստիճանից և լույսի կոնցենտրացիայի աստիճանից	Վարդանյան Ռուբեն Ռաֆայելի	«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ